«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION



ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/512

«08» 04 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր
Արմեն Աբգարի Մուրադյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԵԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման կողմից 27.03.2024թ.-ի զեկուցագրով «Ազատտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մատակարար) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորի կողմից 29.03.2024թ.-ին «Ազատտ» ՍՊԸ-ին ուղղված ԵԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) լուծման և 01.04.2024թ.-ին ոչ ակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման ծանուցումները, պարզեցի հետևյալը.

1. <u>Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

Պատասխանատու ստորաբաժանման կազմը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 27.03.2024թ.-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

2024 թվականի հունվարի 15-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Ազատտ» ՍՊ ընկերության միջև կնքվել է դեղորայքի մատակարարման թիվ «ԵԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» պայմանագիրը: Համաձայն Պայմանագրի [illegible] պահանջի առկայության դեպքում Մատակարարը 20 օրացուցային [illegible] ընթացքում [illegible] մատակարարել պահանջված ապրանքը՝ համապատասխան [illegible]

Պայմանագրի շրջանակներում 2024 թվականի [illegible] 1, Մատակարարին ներկայացվել էին թիվ 1 /10 հատ «Յոպրոմիդ 769մգ/[illegible] 100մլ/1» [illegible] «370» ապրանքային նշանով և «Բայեր ԱԳ» արտադրողի անվանմամբ/, թիվ 2 /10 հատ «Յոպրոմիդ 769մգ/մլ 100մլ/1»

«Ուլտրավիստ 370» ապրանքային նշանով և «Բայեր ԱԳ» արտադրողի անվանմամբ/ և թիվ 3 /15 հատ «Յողիքսանոլ 320մգ/մլ,100մլ/1»՝ «Վիզիպաք» ապրանքային նշանով և «ԳԵ Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» արտադրողի անվանմամբ/ պահանջները, որոնց մատակարարման վերջնաժամկետը սահմանված էր մարտի 2-ը: Պահանջներով սահմանված ժամկետներում որևէ մատակարարում չի իրականացվել: Առաջնորդվելով Պայմանագրի 2.1.1. կետով /այն է, որ մատակարարման ժամկետը 10 օրից ավել խախտվելու դեպքում գնորդը կարող է հրաժարվել ապրանքից/՝ մարտի 12-ին Համալսարանը գրավոր դիմել էր Մատակարարին՝ սահմանելով ևս 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ մատակարարումներն իրականացնելու համար:

Մարտի 15-ին «Ագաատ» ՍՊԸ-ն հանձնման-ընդունման նպատակով մատակարարել էր 20 հատ «Ուլտրավիստ 370» և 15 հատ «Վիզիպաք» դեղամիջոցները: Դեղամիջոցների հետ մեկտեղ Վաճառողը ներկայացրել էր համապատասխանության և փորձաքննության հավաստագրերի պատճեններ համապատասխանաբար «Վիզիպաք» և «Ուլտրավիստ 370» դեղամիջոցների համար, մինչդեռ Պայմանագրով վերոնշյալ հավաստագրերի պահանջ սահմանված չէր, փոխարենը սահմանված էր ապրանքն արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի ներկայացման պահանջ: Մատակարարի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանության և փորձաքննության հավաստագրերի պատճեններ էին, որոնցով չէր երաշխավորվում ապրանքն արտադրողի կողմից Համալսարանին մատակարարվող և գնման առարկա հանդիսացող ապրանքների որակը: Բացի այդ մատակարարված «Վիզիպաք 100մլ» դեղամիջոցի արտաքին փաթեթը, պիտակը և օգտագործման հրահանգը (ներդիր թերթիկը) չեն համապատասխանել 17.05.2016թ. 22 «Դեղերի մասին» օրենքով սահմանված գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ներառված «Վիզիպաք 100մլ» դեղամիջոցի արտաքին փաթեթին, պիտակին և օգտագործման հրահանգին (ներդիր-թերթիկին):

Մարտի 15-ին փաստաթղթային հանձնում-ընդունում չի իրականացվել, քանի որ ապրանքը չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ ապրանքները մատակարարվել են առանց Պայմանագրով սահմանված արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակների: Եվ թեպետ մարտի 12-ին Մատակարարին արդեն տրվել էր 5 օրացուցային օր լրացուցիչ ողջամիտ ժամկետ, մարտի 15-ին Համալսարան գրավոր դիմել է Մատակարարին՝ սահմանելով ևս 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ՝ մատակարարումները Պայմանագրով սահմանված բոլոր պայմաններին համապատասխանեցնելու համար, որի վերջնաժամկետը մարտի 20 էր:

Մարտի 20-ին Պայմանագրով սահմանված արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակների փոխարեն Մատակարարը ներկայացրել էր պաշտոնական գրություն, որում նշել էր, որ իր կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին ապահովում են Պայմանագրի պահանջը, սակայն այլ ձևաչափով: Միաժամանակ խնդրել էր տրամադրել որևէ երաշխիքային նամակ, որի ձևաչափը «ցանկալի» է Համալսարանի համար, որպեսզի Մատակարարը տրամադրեր դրանք պահանջված ձևաչափով:

Քանի որ երկրորդ անգամ տրամադրված ողջամիտ ժամկետի ավարտ էր սահմանվում մարտի 20-ը ներառյալ, Համալսարանը գրավոր պատասխանել էր Մատակարարին՝ [illegible] գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի կատարման [illegible] կողմից վաճառողին տրված երաշխիքային նամակի պատճեն:

Մինչև մարտի 25-ը «Ագաատ» ՍՊ ընկերության կողմից այդպես էլ չստացվեցավ Պայմանագրով սահմանված երաշխիքային նամակները և միաժամանակ, բացառիկ [illegible] անբարյացակամ տրամադրվածությունը Մատակարարի նկատմամբ [illegible] պաշտոնական հարցում էր ուղարկել «Բայեր ԱԳ» ընկերությանը [illegible] և համակարգման մենեջերին և «ԳԵ Հելթքեյր Իռլանդիա Լիմիտեդ» [illegible] պաշտոնական ներկայացուցչության ղեկավարին՝ խնդրելով տալ [illegible] «Ագաատ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանին տրամադրված փաստաթղթերի վերաբերյալ [illegible] դեպքում

«Ազատտ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանին հանձնված դեղամիջոցների երաշխավորված լինելու վերաբերյալ: Ինչին ի պատասխան և՛ «Բայեր ԱԳ», և՛ «ԳԵ Հելթքեր Իռլանդիա Լիմիտեդ» կազմակերպությունները տրամադրել էին միևնույն պատասխանը.

1. ներկայացված փաստաթղթերը չեն հանդիսանում երաշխիքային նամակ, այլ իրենցից ներկայացնում են ապրանքի կոնկրետ խմբաքանակը գործարանից դուրս գալուց կատարվող հետազոտությունների արդյունքներ, որոնք երաշխավորում են արտադրված խմբաքանակի որակը, բայց չեն երաշխավորում դրա պահպանման և տեղափոխման պայմանները.

2. «Ազատտ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում «Բայեր ԱԳ» կամ «ԳԵ Հելթքեր Իռլանդիա Լիմիտեդ» ընկերությունների գործընկեր, ուստի ընկերությունները չեն կարող երաշխավորել մատակարարված ապրանքների որակը և անվտանգությունը:

Բացի այդ «ԳԵ Հելթքեր Իռլանդիա Լիմիտեդ» ընկերության հայաստանյան պաշտոնական ներկայացուցչության ղեկավարը տրամադրել էր ԳԵ Հելթքեր Իռլանդիա Լիմիտեդ» գլխամասի գրություն, որում հստակ ասվում էր, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծված «16090606» սերիական համարով «Վիզիպաք» դեղամիջոցը արտադրվել և փաթեթավորվել է Բուլղարական շուկայի համար և դրա փաթեթավորումը ու ներդիր-թերթիկը չեն համապատասխանում Հայաստանում գրանցման պայմաններին:

Միաժամանակ հայտնում ենք, որ 15.03.2024թ.-ին «Ազատտ» ՍՊԸ-ի կողմից համալսարանին հանձնման-ընդունման նպատակով մատակարարվել էր նույն՝ «16090606» սերիական համարով «Վիզիպաք» դեղամիջոցը:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Ազատտ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունվարի 15-ին կնքված «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» ծածկագրով դեղորայքի գնման պայմանագրի շրջանակներում ներկայացված պահանջներով սահմանված ժամկետներում՝ մինչև մարտի 2-ը, որևէ մատակարարում չի իրականացվել:

2. Մատակարարման ժամկետը 10 օրից ավել խախտվելու դեպքում ըստ «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1-ԵՊԲՀ-9» պայմանագրի 2.1.1. կետի Համալսարանը կարող էր հրաժարվել ապրանքից, սակայն մարտի 12-ին Մատակարարին տրամադրվել է 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ մատակարարումներն իրականացնելու համար:

3. Տրամադրված 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետում՝ մարտի 15-ին, «Ազատտ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված թիվ 72, 73, 74 չափաբաժինների ապրանքները չեն համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ ապրանքները մատակարարվել են առանց Պայմանագրով սահմանված արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակների, փոխարենը ներկայացվել են համապատասխանության և փորձարկման հավաստագրերի պատճեններ:

4. Մատակարարումները Պայմանագրով սահմանված բոլոր պայմաններին համապատասխանեցնելու համար երկրորդ անգամ տրամադրված 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետի ընթացքում՝ մինչև մարտի 20-ը, պահանջված երաշխիքային նամակները դարձյալ չեն ներկայացվել, փոխարենը ներկայացվել է պաշտոնական գրություն, որով Մատակարարը [illegible] է տրամադրել որևէ երաշխիքային նամակի օրինակելի ձև, [illegible] պահանջված ձևաչափով:

5. Մեկ այլ գնման ընթացակարգի շրջանակներում [illegible] փուլում արտադրողի կողմից տրամադրված երաշխի[illegible] նույնպես պահանջված փաստաթղթերը չեն ներկայացվ[illegible]

6. «Ուլտրավիստ 370» դեղորայքը արտադրող «Բայեր ԱԳ» ընկերության ԱՊՀ երկրներում բիզնեսի և համակարգման մենեջերը գրավոր հաստատել է, որ ներկայացված փաստաթուղթը չի հանդիսանում արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ, այլ փորձաքննության հավաստագրի պատճեն է, և որ «Բայեր ԱԳ» ընկերությունը չի կարող երաշխավորել «Ազաստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքների որակը և անվտանգությունը:

7. «Վիզիպաք» դեղորայքը արտադրող «ԳԵ Հելթքեր Բոլանդիա Լիմիտեդ» ընկերության հայաստանյան պաշտոնական ներկայացուցչության ղեկավարը գրավոր հաստատել է, որ ներկայացված փաստաթուղթը չի հանդիսանում արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ, այլ համապատասխանության հավաստագրի պատճեն է, և որ «ԳԵ Հելթքեր Բոլանդիա Լիմիտեդ» ընկերությունը չի կարող երաշխավորել «Ազաստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքների որակը և անվտանգությունը:

8. «Վիզիպաք» դեղորայքը արտադրող «ԳԵ Հելթքեր Բոլանդիա Լիմիտեդ» ընկերության հայաստանյան պաշտոնական ներկայացուցչության ղեկավարը տրամադրել է ԳԵ Հելթքեր Բոլանդիա Լիմիտեդ» գլխամասի գրություն, որում հստակ ասվում է, որ «Ազաստ» ՍՊ ընկերության կողմից Համալսարանին մատակարարված «16090606» սերիական համարով «Վիզիպաք» դեղամիջոցը արտադրվել և վավերացվել է Բուլղարական շուկայի համար և դրա փաթեթավորումը ու ներդիրթերթիկը չեն համապատասխանում Հայաստանում գրանցման պայմաններին:

9. 29.03.2024թ. «Ազաստ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագիրը թիվ 72, 73, 74 չափաբաժինների մասով միակողմանի լուծման մասին: Նույն օրը ծանուցումը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

10. 01.04.2024թ. «Ազաստ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների վճարման մասին: Մինչև ապրիլի 8-ը ներառյալ «Ազաստ» ՍՊԸ-ի կողմից Համալսարանի որևէ հաշվեհամարին փոխանցում չի իրականացվել:

3. <u>Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի տնօրեն Ա.Ա.Մուրադյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կազմի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում է հրապարակում [illegible] մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է [illegible] իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատ[illegible] որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պա[illegible] ընթացակարգը չկայացած հայտարարվելու կա[illegible]

հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող բառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող բառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է, ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունվարի 15-ին կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-2024/4-1 ԵՊԲՀ-9» ծածկագրով դեղորայքի գնման պայմանագիր:

Պայմանագրի շրջանակներում փետրվարի 12-ին ներկայացված թիվ 1, 2, 3 պահանջներով սահմանված ժամկետներում՝ մինչև մարտի 2-ը, «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից որևէ մատակարարում չի իրականացվել:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից մարտի 12-ին և մարտի 15-ին երկու անգամ տրամադրված ողջամիտ ժամկետների ընթացքում՝ մինչև մարտի 20-ը, «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները չեն համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ ապրանքները մատակարարվել են առանց Պայմանագրով սահմանված արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակների:

Մարտի 29-ին «Ագաստ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագիրը թիվ 72, 73, 74 չափաբաժինների մասով միակողմանի լուծման մասին:

Պատվիրատուի ղեկավարի կողմից ապրիլի 1-ին պաշտոնապես ծանուցվելուց հետո «Ագաստ» ՍՊԸ-ն 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ապրիլի 8-ը ներառյալ, չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ « Ագաստ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Պատասխանատու ստորաբաժանման կազմի կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, գնահատել բավարար:

2. «Ագաստ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմանները չպահպանելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ագաստ» ՍՊԸ	00435781	ք. Երևան, Տ.Պետրոսյան 31/1	-	X	-	08.04.2024թ. ԵԱՃԱՊՁԲ-2024/4-1 ԵՊԲՀ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ